35. ՇԱՐԻ ՄԱՐԳՐԻՏ

Կէղի, չէղի պապմ ու մամ ու ախչիկ մը կէղի։ Ժուք ու ժամանակ կընցնի, մամ կմեռնի։ Ժուք ու ժամանակ կմնա պապ գելի կկարքվի։ Անսոյե կնիկ մը կրերա ուրին, ախչիկ գելի կէրթա փընչարի չոլ։ Մամ կէրթա կոլըրտի յոթն ախպրի ակ օձի մը ձագ կբերա, կթալա փառչ, փըշըմը ճուր գըլնա մեջ, կգնա գուռ, հարի ախչիկ կուգա։

Ախչիկ չոլից գիգա, կեսա.— Մարե, փըշըմը հաց տուր ուտիմ, անոթի իմ։

Կըսե.— Լաո՛, չէ, փըշըմը ճուր խմի նոր խաց կե։

Ախչիկ մամու խաթրից չի ելի, ճուր կխմի։ Բան մի բոգ չաղեց, օձ փառչից գնաց բոգ, բոգ չաղեց ու գնաց փոր, ըսեց.

— Մարե, բան մի իմ բոգ չաղեց։

Ըսեց.— Լաո՛, խիլ էր (տաշեղ) կըռշ էր, բան չկա։

Կմնա ժուք ու ժամանակ մի, ախչկա փոր կուռի՝ կշատնան օձեր, մամ կեսա պապուն.

— Քու ախչիկ փիջ մը պիտի բերե, փաթա քու գլոխ։

Էն լէ՝ կեսա.— Հավար, մագաթ իմ ախչիկ, էրեխա ա, ի՞նչ գինա էտ բաներ։

Էն լէ կեսա.— Վոլլա, ճժով ա, փիջ մը պիտի բերա, փաթա քու գլոխ։

Կգրա վըր պապուն, օր ղէնի կորցու։ Պապ գիլա, կողփա, գելի կառի զախչիկ, փըշըմի հաց կէրթա։ Քենիմ օրվա ճամբախ կտանի, կտանի ամրրվենի սարի մի գլոխ։ Էնտեխ կնեզընա, ախչիկ կեսա.

— Ապո ջան, փըշրմի նստինք, ռնաթինք։

Կըսե.— Դե նստինք։

Կնստին ամբրվենի սարի գլոխ, կնստին, ռնաթին։ Ախչկան քուն գիգա։ Ախչիկն կքնի, պապ կհանա ղշլել կգնա ընդրա գլխու տակ, էնի կքնի, պապ նստի վրեն լա, լա գելի ու գիգա, գիգա տուն։

Ախչիկ գախոց գախ կքնի, գիմնա օր մարդ չկա սարի գլոխ, գելի կնստի լա, կըսե. «Գյալո, էդ ի՞նչ բան էր էլավ իմ գլոխ»։

Գելի գիգա, պրակի մը ռաստ գիգա, բարակ օձի մե ճամխով կէրթա, գինա ճամփախ ու կէրթա ծառիմ ու ախպրի մը ռաստ գիգա։ Ընդեխ կէրթա. ծարավ ի, անոթի ի, կնստի ախպրի վրա. ճուր կխմա։ Ճուր օր կխմա, ճրի միչի օձեր կկոկռան ուր փորու մեջի օձերուն կկլանչին, կըսին.

— Արի օդա։

— Օդա արև ա։

— Ջայիր ա։

— Ճուր ա։

— Արի, մըզի, ուտինք, խմինք։

Փորու միջու օձեր կըսին. «Արի օդա, տաք, տաք ջիգրի մեջն ինք, արի օդա, մրզի եմըգ-կեմըգ գիգա»։

Դրսի օձեր կըսին. «Արի օդա, օր ա, արև ա, բարև ա, չայիր ա, չինգան ա»։ Օր կկղանչին, փորի մեջի օձեր, ախչիկ կօռձկըդա, ու օձեր գիգան գունդ-գունդ կթափին, կքաշվին ճրու մեջ, կխասին ճրու մեջի օձերուն։

Ախչիկ կըվացվի, կսրսփի, բան մի չմնա փորու մեջ, ծառին կեսա.

— Ծառ խոնար։

Ծառ կգետնի, գլոխ կկախա, գելի կնստի ծառի վրեն, կեսա.

— Ծառ խոնար։

Ծառ գելի կկանի։ Կնստի էդտեխ։

Թագավորի տղեն իլխիք, ձիանք կբերա վըր ճրուն։ Ախչկա շաֆխկ (ցոլք) զարկի մեջ ճրուն։ Թագավորի տղեն կէնա, չէնա ձիանք չիգան վըր ճրուն։ Կեսա. «Գյալո, էդ ի՞նչ շաֆխկ ա մըջ ճրուն»։ Դոր կաչքին, բան մը չկա։ Կաչքին ծառի գլոխ՝ խուռնիկ-խրեղեն ախչիկ մը կա։

Կեսա.— Ախչիկ, դուն խողաձի՞ն իս, թե՞ խրեղեն։

Կեսա.— Ես էլ ձե պես խողածին իմ։

Կեսա.— Ախչիկ, կառնի՞ս ընձի։

Կեսա.— Կառնիմ։

Կեսա.— Կանի էրթամ քենիմ ձեռք գոլ, քուսան առնիմ իգամ, խուրեր կղանչիմ, նոր քըղի տանիմ, չրսին անտեր ախչիկմ էր, սարեն բռնեց բերեց։

Կեսա.— Տա՛ր ընձի, կփոշմընիս։

Կեսա.— Կտանիմ։

Թագավորի տղեն կէրթա կքոմա, մե հարիր ձիավոր մե, կառնի յոթ ծեռ գոլ քուսան ու գիգա։

Բոշի գյաճկեն կառի կէրթա էրկու փառչ, ախպուր ճրու, կաչքի շաֆխկ մե մեջ ճրուն է։ Հմա էրկու կուժ կզարկա իրար, կճարթա, կեսա. «Ք.... հմալ ախպրկնկա պապուն, ընձի կեսա՝ ղու գեշ իս, գու քոնուկ իս, դոդոշ իս, դու շաշ իս, դեղնուկ իս, իմ ջաֆխկ հանդե զարգե մեջ ճրուն»։

Ախչիկ լէ կեսա.— Բոշի գյաճկե, հ՚որի՞ փառչեր կոտրեցիր, իմ շաֆխկն էր։

Էն րէ կեսա.— Ախչիկ, իմ ծեռ բռնի ես էլիմ քու մոտ։

Ախչիկ կեսա.— Ծառ խոնար։— Ծառ գլուխ կկախա, հ՚ինք գիչի ցածր, իր էվութեն գյաճկին քըսա կէնա։

Գյաճկեն զախչիկ կէնա փունջ մը ոըհան, կզարկա ախպրի ակ։ Իդահխս գյաճկեն կելի կնստի ծառի գլոխ, ծառ կշիտկի։

Թագավորի տղեն կառի յոթ գոլ, քուսան, ուր խուրեր, գիգա։ Գիգան կեսին. «Աստված քու տուն ավիրա, կըսիս խուռնիկ-խրեղեն ա, շաֆխկ զարկի մեջ ճրու, հըմլա ա, իգա՞ ա քու խորոտ»։

Տղեն կաչքա զէտի, կշիվարի, կեսա.— Ախչի, ես գացի դու սիվտակ էր, հ՚ո՞րի իս սևցի։

Կեսա.— Մացի արևու հ՚առաճ, սևցա։

Կեսա.— Ախչի, ես գացի դու քոնուկ չիր, հ՚ո՞րի քոնվար։

Կեսա.— Քու ետև ծաղիկ հանի, քոնվա։

Կեսա.— Ես գացի, քու աչքեր խորոտ, մկա հ՚ո՞րի ճախտվեր ա, շաշեր ա։

Կեսա.— Քու ճամփախ աչքեցի, իմ աչքեր ճախտվան։

Կեսա.— Ախչի, ես գացի քու պռկներ բարակ, օյմիշ խորոտ, հ՚որի՞ մկա էղե մռթոշ։

Կեսա.— Իմ պապու օչխար շատ էր, էկավ գետաց հ՚ընցավ, ես ըսեցի դուբռու, գուրռու, իմ պռկներ խաստցան։

Կշիվարի ու կկանի, տղեն կեսա.— Դե, վերցուցեք, էրթանք։ Կաչքա օր փունշ մը խրեղեն ռեհան ախպրի ակն ա։

Կեսին.— Էդա խրեղեն ռեհան վի՞ր լայեղ ա, թագավորի տղին լայեղ ա։ Կքաղին կղարգին թագավորի տղու գլոխ։

Փըշըմ կքշին, գիգան ճամփախ, բոշու գյաճկեն կեսա.— Էդա ռըհան կթալիս, թալ, թը չէ՝ կիգամ, քըղի կնկութին չէնիմ։

Կեսա.— Հա՜յ հավար, հայ մադաթ, էդ թագավորի տղի լայեղին ա, էդ իմա՞լ թալինք։

Կեսա.— Պտի թալիս, օր չթալիս, չիգամ։

Օր ռեհան կթալա, կէղի խրեղեն նռի մը խատ։ Կպատի գետին, կվերցուն մեկ լէ գետնեն, կեսին. «Վերցեք տվեք թագավորի տղին, էնդրա լայեղին ա»։ Կվերցուն կիտան թագավորի տղու ծեռ. տղեն կթալա ուր բերան։

Բոշի գյաճկեն կեսա.— Մ'ուտի, օր ուտիս, քղի կնկութեն չէնիմ։

Կթալա բերնեն, կէղի պոտ քուռակ մի, գընկնի ծիաներու ետև։

Կէրթան գեղի մոտ, տան հ'առճև բոշի գյաճկեն կեսա.— Օր դու էդ պոտ քուռակ չմատղիս, կիշիմ, քու գոմ, չէղիմ քու կնիկ։

Պոտ քուռակ կմատղին, կէղի կաթ մի արուն, կթռի թագավորի տղի փանշարի հ'առեճ, կէղի խրեղեն բարդի մի ծառ։

Բոշի գյաճկեն ա, կառի գիգա տուն, կփսակա վըր ուրին, կմնա փելմի, ժուք ու ժամանակ մի։ Բոշի գյաճկեն կէրկուխուգովնա. թագավորի ռըշպար քուբար կքոմե էդ բարդի ծառի տակ, ատծուց խնդիր կէնե օր թը իմալ խորոտ բարդի մի ծառ հ'ելի ուր փանշարի հ'առաշ։

Բոշի գյաճկեն կպառկի, կբերա գյաճկե մի, թագավորի տղին կեսա.

— Էդա բարդի ծառ կկտրիս, կենիս ղօրորոց։

Թագավորի տղեն կեսա.— Հա՜յ հավար, հա՜յ մադաթ, իդա խորոտ բարդի ծառ իմա՞լ կտրիմ, առքը չի՞ գեղագործուն օրորոց, օսկի օրորոց։ — Հմալ կէնե, չկրնա կնկա վրեն։

Կեսա.— Պտի կտրիս։

Կբերա բալթաչիք, կիտա կտրել։

Կբերա ուաթեք, կիտա տաշել, շիքել։ Ախչիկ կէղի տաշեղ մի, կթռի փողոց։

Ուրիշ պառավ մի գիգա օր տաշեղ ժողվա տանի թալա թոնդիր վառա, էդ տաշեղ լէ կվերցու, կառի կտանի տուն։ Զէն մեկել

տաշեղներ կվառի, էնի չվառի, կեսա. «էդա խորոտիկ տաշեղ չվառիմ». կդառնա կթալա ալրի փեթակ։

Պառավ դելի կէրթա ղրկեցի տուն, կօլորտի, դուռ կփակա կէրթա։ Ախչիկ փեթկի մեշեն դելի կավլա, կխորթա, թունդիր կվառա, խաց կթխա, էմեդ ղէմեկ կէնա, կուտա, պառվու փայ լէ կթորկա, ափրշում կքանդա, ղպառվու խալ ու խալուշեն կգործա, կէրթա կմտնի փեթակ։

Պառավ գիգա կերկմտի, կեսա. «Ասսու սիրուն, էդ վո՞ն ա իմ տուն էկի, իմ դուռ փակ, վառե, խաց թխե, էմեդ էփե, կերե, իմ փայ թորկե գացե»։

Օլոր օր պաղ կպախա վրեն, կփաթթի խսիլ, զինք կիտա քունջ մի։ Կտեսի խուռնի-խրեղեն ախչիկ մի փեթկի մեշեն էլավ, ավլեց, խորթեց, խաց թխեց, էմեդ կերավ, ճոչո փայ լէ թորկեց, գնաց մըտավ փեթակ։

Ճոչոն կվազի կխասի, ծեռք կբռնա, կեսա.

— Քու գլխուն արևուն մեռնիմ, դու խողածի՞ն իս, թե՞ խրեղեն։

Կեսա.— Ես լէ խողածին եմ քե պես[1]։ — Կեսա,— ճոչո, առի թոմրա էնա. օր իմ էվութեն խլղին չէսիս։

Կեսա.— Չէ՛։

Ախչիկ փեթկից գելնի։

Դելի մի կը հայի, թագավորի տղի իլխին կցրվի գեղի մեջ, օր պախին ձըմեռն ա։

Ախչիկ լէ կեսա.— Ճոչո ջան, գնա մեկ լէ ըի մենք պախինք։

Կեսա.— Լաո՛, մըզի դարման չկա, բան չկա, մեք իմա՞լ պախինք։

Կեսա.— Դու գնա պե, ես կպախիմ։

Ճոչոն դելի կէրթա, կեսա.— Թագավորու տղա, քու գլխուն արևուն մեռնիմ, էլխիմ լէ տուր մեք տանինք պախինք։

Կեսա.— Գացեք էդրա գլոխ զարկեք, էկեր ա ընձի տնաղ կէնա,— կեսա,— տփեք, էնեք դուս։ Դառնա կեսա.— Խեղճ ա, մ'ծեծեք, մ'սպանեք։ Գացեք էն թառի տկի, չորցուկ, ճռդոտ, մուռդալ քուռակ տվեք թ'տանի։ Օր փիթցավ՝ թըխ փիթնա, մըզի պետք չէ։

Պառավ կառի ղծին ու կէրթա, կտանի տուն, ախչիկ ղծին կկապա, տեխն կշիքա, զուր քիթ ու բերան կլվա, ընդրա հ'առճև

---

1 Բնագրում խրեղեն (Ս. Կ.)։

կէղի ճուր, չայիր ու չիման, ու ուրին կարծա ու կխմա։ Ծին օր կթիմրա, ծեռ կքսա ջանդկի վրեն, թիղ մի միս կըրռնա։ Կպախա. Հ՚մեն օր պտի զուր քիթ ու բերան լվա, կէղի ճուր ու չիման, ուրին կարծա, ծեռ քսա վըր պառեկին, թիզ մի միս կբռնա կլավնա։ Է՚, ծին չաշխտվի, շատ կկլավնա, խետ ամբերուն կխաղա։

Էկավ թագավորի իլխիք ժողվելու օր, օր թ՚ժողվին, կժողվին հ՚մեն կեսին. «Պառվու մոտ մէրթաք, ամոթ ա, մկա փիթցեր ա»։

Ախչիկն ա, գելի պառավ կճամխա թագավորու տուն, ինք լէ ձիուն կսորվըցու, կեսա.

— Քու տեր օր էկավ զքըզի տարավ, էլիս դռան շեմիք, շոքիս, օտք մը թալիս դրսու դեն, օտքմ լէ ներսու դեն ու նստիս վըր շեմքին, օր թագավոր իգա ուր թախթեն, չելիս, չկանիս օր քըզի ճնճխին, չելիս ու չկանիս, հարի ես կիգամ, դու չկանիս, երբ օր ես էկա, վարոց մի զարկեցի, դու թռիս կանիս։

Պառավ կեսա.— Թագավորու տղա, քու դլխուն արևուն մեռնիմ, դե արի քու ծին տար։

Կեսա.— Գացե՛ք, ըդ պառվուն ծեծեք, էնեք դուրս, թ՚էրթա, էկե տնազ կէնա, փիթցուկ ծի էր, մկա փիթցեր ա։

Մեկ լէ պառավ կէրթա, կեսա.— Արի՛ տար, դու տնազի մա՞րդ իս օր ես քզի տնազ էնիմ։

Թագավորի տղեն կեսա.— Գացե՛ք, սա՛նք սուտ ա, օղորթ ա, թը չէ՝ իդրա գլոխ զարկինք։

Գիգան, կէրթան կաչքին, կշիվարին էդ ծիու վրեն, կեսին. «Հմլա խրեղեն ծի չի կա։ Էդի էլի առիք, չհախթիր էդտեղ, չպարտըկի էդտեխ, էրանեկ քու տիրուն օր մեկ լէ տեսի քզի, թամաշի բան ա»։

Կէրթան կեսին.— Թագավորու տղա, քու դլխուն արևուն մեռնիմ, օր թը տեսնիս, կշվարիս, խրեղեն ա, ծի չէ։

Թագավորի տղեն գելի գիգա էդտեխ օր տեսի էդ ծին։ Կշիվարի էդ ծիու վրեն, կեսա. «Գյալո, էդա խրեղեն է, էդ ի՞նչ է»։

Կբերին ջարդարեք, դռներ կքանդին, ծիու ջանդակ մեջեն չելի, պատեր կփլցուն, գամ կդրին բերան, կհանին դուրս։ Կբերին դրսու դուռ, ծին էրկու օտ կթալա դուրս, էրկուս լէ ներս[1], կնստի։ Աջխարք աջխրքով գիգան, կէնին, չէնին ծին չէլի կանի։ Թագավորի տղեն լէ կզարկա, ինչ քեշիդ կէնին, չելի։

---

1 Բնագրում՝ դուրս (Ծ. Կ.)։

Կեսին.— Պառա՛վ, արի զա՛ր, թրխ ելի, ախըր պախող դու իս։

Պառավն ի դիգա, ինչ քեշիդ կէնա՛, չե՛լի։

Թագավորի տղեն կեսա.— Արի ռասդին ասա, իդրան պախող կա՞։

Կեսա.— Չկան, ես մեկ իմ։

Կեսա.— Քըզի, ախչիկ, տղա խարս չկա՞ն։

Կեսա.— Չէ, ես մեկ իմ։

Կեսա.— Տին դու իս պա՞խի։

Կեսա.— Խա՛։

Կեսա.— Դե զա՛ր, թելի։

Կղարգա, չելի, ինչ քեշիդ կէնա, չելի։ Վո՛ր գիգա կեսա. «Թագավորի տղա, էրանեք բզիկ հեմլա ծի կա»։

Էն լէ կեսա.— Ի՞նչ էնինք, էկի նստի օդի, չելի։

Կեսին.— Թադավորու տղա, քո գլխուն, արևուն մեռնիմ. իդրան պախող կա, թրխ գա զարգա ծիուն, ելի։

Պառվուն կեսին.— Արի ըդրա պախող բեր։

Կեսա.— Ես իմ, մարդ չկա ընծիկ։

Թուր կլրոգին, կգնին վըր բոգուն, կեսին. «Քըղիկ կէնինք էրկու կտոր, կեսի՛ս, ասա»։

Պառավ կվախենա, կեսա.— Ընձի միք մորթա, իմ ախչիկ ա պախի զծին։

Կեսին.— Դո՞ր ա քու ախչիկ։

Կեսա.— Փաթթուկ խսիլ, քունշն ա։

Կէրթան, կտեսին օր ախչիկ չարշափ քաշե գլխուն. կանանչ վարոց կառի ու գիգա ծիու մոտ։

Վարոց կզարգա ծիուն, կեսա.— Դե ելի՛, քու տեր բեբախտ ա, խո դու լէ բեբախտ չէղիս։

Թագավորի տղեն կերկմտի, կեսա. «Կանի տեսիմ էդ ի՞նչ գեելի իդրա մոտեն»։

Կառին զծին ու կէրթա։

Օլոր օր մարգրիտ ին բերած բոշի գյաճկին շապիկ շարին։ Գեղի ախչիկներ հ'մեն կքոմին, կառին կէրթան ընտեխ օր մարգրտի շապիկ շարին։ Ախչիկներ դեմի կշարին, դեմի կքանդվի, առճվի մաս կշարին, ետև կքանդվի, չելի գլոխ։

Թագավորի տղեն կեսա.— Մնաց ո՞րն օր չշարվի։

Կեսին.— Մնաց պառվու ախչիկ, ծիու պախող։

Կեսին.— Պառվու ախչիկ, արի էրթանք, թագավորի խաբսին մարգրտի շապիկ շարա։

Ախչիկ կեսա.— Գացեք թագավորու տղին ըսեք, խալի խալիչա փռեք հարի օդա, ես քելիմ վրեն հ՚իգամ, մարգրտե շապիկ շաղիմ։

Կէրթան կեսին. բոշի գյաճկեն կեսա.— Էդ իմա՞լ մախկուլ ախչիկ ա, օր խալու խալիչի վրեն կքելա, թրխ չիգա ու չշարի։

Թագավորի տղեն կեսա.— Գացե՛ք, պարղեք։

Թագավորի դռնեն խալու խալիչա կպարզի հարի ինոնց դուռ։ Ախչիկ կքելա վերեն կշարշրփվի, կպլուլվի կքելի գիգա թագավորի դուռ։ Կտեսի ախչիկներ խալու խալիչի վրեն նստուկ են, մարգրտե շապիկ կշարին, դեմի կշարին, դեմի կքանդվի։

Էդ ախչիկ կեսա, ախչիկներուն.— Դե, էլեք գացեք։

Էդ ախչիկներու իզին կիտա, գելին կէրթան։

Բոշի գյաճկեն, թագավորի տղեն ու իդա ախչիկ կմնան իդա տեխ։ Իդախս ախչիկ առավ շարեց ու բաշլայեց խաղ կանչել, կեսա.

— Շարեցե՛ք մարգրիտ, շարեցեք,
Խորթ մամու տեր իմ,
Շարեցե՛ք մարգրիտ, շարեցեք
Ելա գացի քանշրղուքի
Շարեցե՛ք մարգրիտ, շարեցե՛ք,
Խորթ մամու տեր իմ։
Իմ մամ զարգվավ յոթ ախպրի ակ,
Շարեցե՛ք մարգրիտ, շարեցեք,
Խորթ մամու տեր իմ։

Ախչիկ հ՚մեն ուր դլխու գալած ըսեց խաղով ու շապիկ շարեց։ Կշարա կպրծի հ՚մեն, իդա շապիկ կշարվի կպրծի, կեսա.

— Շարեցեք իդա կոճկներ դրեցեք, շարեցեք թմմեցեք։

Բոշի գյաճկե կեսա.— Մի շարա, մի շարա, ես չխագնիմ։ Թագավորի տղեն կեսա.— Թոր թը շարա, ես կխագիմ, դու մի խագի։ Կշարա կթմմի, կոճրկներ կգրի, կեսա.—

Շարեցե՛ք մարգրիտ, շարեցեք,
Խորթ մամու տեր իմ,
Շարեցե՛ք մարգրիտ, շարեցեք,
Շապիկ թմմեցեք,
Կոճակներ շարեք։

Ախչիկ խաղով, հ՝ըմեն ուր դարդեր խսա կէնա, մեկ կեսա. «Շարեցեք, մարգրիտ շարեցեք, խորթ մամու տերի իմ», մեկ լէ ուր պատմութեն կէնա։

Թադավորու տղեն գելի բոշի գյաճկի ծամեր ու էն պզտիկ գյաճկեն օր ընդրանե էլեր է, ընդոնց ծամեր կկապա յոթ տարվա խամ ջորու պոչ, կեսա.

— Սար զարդիս, ձոր զարդիս, հ՝իրիկուն ընդրա ծամեր, ավագ ծովը թանթխիս բերիս։

Ջորին կառի ու զէգիկ կէրթա, սար կղարգա, ձոր կզարդա հ՝իրիկուն ընդրա ծամեր թանթխա ավագ ծով, կրերա։

Կբէ՛՝ա յոթն օր, յոթ գիշեր, յոթ ծեռ դոլ քուսան կբերա, ուրին խարսնիս կէնա։

Էնիկ խասավ ուր մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Հ՝երկնուց իրեք խնձոր իջավ. մեկ ընձի, մեկ քրզի, մեկ լէ շամաթին։